ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունվարի 2012թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ.40 շենքի հ.1 բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.09.2009թ. հ.2584304 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Նորիկ Մեհրաբյանին։

2. Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ.40 շենքի հ.5 բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.09.2009թ. հ.2584304 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գևորգ Հակոբյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ.40 շենքի հ.1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի պետական «Բարեկամություն» անսամբլի հիմնադիր և ղեկավար Նորիկ (Նորայր) Մեհրաբյանին:

«Բարեկամություն» անսամբլը, շնորհիվ Նորայր Մեհրաբյանի քրտնաջան և անմնացորդ աշխատանքի, մեծ ճանաչում ստացավ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև ողջ աշխարհում և այժմ էլ վայելում է բազմահազար հանդիսատեսի սերն ու համակրանքը:

Հայկական պարերի նոր մշակումները, աշխարհի ժողովուրդների հարուստ ֆոլկլորը, դասական շատ ստեղծագործությունների յուրովի ու նոր մեկնաբանումները կազմեցին անսամբլի ծրագրի հիմքը, իսկ Նորայր Մեհրաբյանի արհեստավարժ մոտեցումը և սերը դեպի պարարվեստ շարունակում է մեծ հաջողություններ բերել անսամբլին:

Գնահատելով Նորայր Մեհրաբյանի ավանդը հայ պարարվեստի զարգացման բնագավառում՝ 1976 թվականին Նորայր Մեհրաբյանին շնորհվեց «ՀՀ Վաստակավոր արտիստ» կոչումը, իսկ 2006 թվականին արժանացավ «ՀՀ ժողովրդական արտիստ» պատվավոր կոչմանը և Մ.Խորենացու անվան շքանշանին:

2. Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ.40 շենքի հ.5 բնակարանը քննարկվող նախագծով նախատեսվում է անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատար Գևորգ Հակոբյանին:

Գևորգ Հակոբյանը օպերային տարբեր դերերգերով հանդես է գալիս ինչպես Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, այնպես էլ մի շարք արտասահմանյան՝ Իտալիայի Կալյարի, Իսպանիայի Վալենսիա, Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ և այլ քաղաքների թատրոններում:

Բարձր են գնահատվել երիտասարդ, այսօր արդեն աշխարհի մի շարք օպերային թատրոններում իր ներկայությունը հաստատած երգչի տաղանդն ու ծառայությունները. 2007 թվականին Գևորգ Հակոբյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակին՝ օպերային երգեցողության ասպարեզում ունեցած ակնառու հաջողությունների համար, իսկ 2011 թվականին, ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ, Գևորգ Հակոբյանին շնորհվել է «ՀՀ վաստակավոր արտիստ» պատվավոր կոչումը:

Հաշվի առնելով Նորայր Մեհրաբյանի և Գևորգ Հակոբյանի ունեցած վաստակը պարավեստի և երգարվեստի բնագավառներում, առաջարկվում է վերը նշված բնակարանները նվիրել մշակութային գործիչներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ